




# Յ Ո Ւ Շ Ա Ց Ո Ւ Մ

## William Saroyan The Man - The Writer



Copyright 1976 Paul Kalinian

Աշխարհաճանօթ ամերիկահայ արձակագիր և թատերագիր Ուիլյամ Սարոյեանի՝ 1908-1981, յիշատակը վառ կը պահուի շնորհիւ պարբերական նախաձեռնութիւններու:

Այս կարգի վերջին իրագործումներէն, Ֆրեզնոյի մէջ՝ California State University-ի նախաձեռնութեամբ, Սարոյեանի ծննդեան 90-ամեակը նշուած է անցնող Մարտի 20-ին, հայ և ամերիկացի ատենախօսներու մասնակցութեամբ. Սարոյեան մարդը և գրողը ներկայացուած է բազմաթիւ երեսակներով:

ՀԲԸՄ-ի Գահիրէի Մասնաճիւղն ալ՝ Գահիրէի Ամերիկեան Համալսարանի աջակցութեամբ, ծրագրած է յառաջիկայ Մայիսի 19-ին, Համալսարանի "Oriental Hall"-ին մէջ հասարակութեան ներկայացնել "William Saroyan: The Man The Writer" վաւերագրական ժապաւէնը, որ արդէն ժամանակէ մը ի վեր, սփիւռքահայ քանի մը կեդրոնի մէջ, միշտ ՀԲԸՄ-ի նախաձեռնութեամբ, մեծ հետաքրքրութիւն յառաջ կը բերէ:

Մինչեւ վաւերագրական ժապաւէնին ներկայացումը, «Տեղեկատու»-ի ընթերցողներուն կը ծանօթացնենք ժապաւէնին հեղինակը՝ կեանքին և ստեղծագործութեան ամենասեղմ գիծերուն մէջ:

Խարբերողի և Մարաշցի ծնողքի զաւակ Փօլ Գալիմեան, ծնած է Պէյրութ՝ 1932-ին: Ընտանիքով փոխադրուած են Դամասկոս՝ ուր ստացած է նախակրթութիւնը և անցուցած է երիտասարդութեան տարիները:

Ծատ փոքր տարիքէն, ան մեծ հետաքրքրութիւն ցուցաբերած է լուսանկարչական արուեստին նկատմամբ, և օգնականի շրջանը բոլորելէ ետք, Պէյրութի մէջ բացած է իր առաջին Լուսանկարչատունը, ապա անցած է Մոնրէալ, և յետոյ Միացեալ Նահանգներ, ուր՝ 1967-ին, Նիւ Եորքի Լուսանկարչութեան Հիմնարկէն մասնագիտական աստիճան ստացած է:

Կեանքի յարափոփոխ շրջանէ մը ետք, հաստատուած է Ֆրեզնոյ՝ ուր բացած է իր երկրորդ Լուսանկարչատունը. այստեղ առիթունեցած է պատրաստելու բազմաթիւ անձնաւորութիւններու դիմանկարները՝ ըլլան անոնք,

քաղաքագէտներ, բարձրաստիճան գինուորականներ, հայ եկեղեցականներ, սինեմայի աստղեր, արուեստագէտներ, ինչպէս նաեւ բնորդներ և ժողովուրդի բոլոր մակարդակի մարդիկ:

Այս ձեռով, իր բազմաթիւ լուսանկարները տեղ գտած են գիրքերու, միջազգային տարողութեամբ լրագրերու, հանդէսներու, ինչպէս նաեւ հանրային և պետական հաստատութիւններու մէջ:

Որպէս յիշատակ-նամականիշ, ԱՄՆ-ՍՍՀՄ նամակատուներուն կողմէ, 1991 Մայիսի 22-ին, համատեղ թողարկուած է Ուիլյամ Սարոյեանին նուիրուած նամականիշը, որուն համար ընտրուած է Փօլ Գալիմեանի պատրաստած արտայայտիչ լուսանկար-դիմանկարը:

Արուեստագէտին միւս փառասիրութիւնը եղած է ֆիլմարուեստը: Սարոյեանի մահէն անմիջապէս ետք, 1981-ին՝ Գալիմեան պատրաստած է անոր յատկանշական դիմանկարներուն տեսա-լսողական ներկայացում մը՝ որ վաթսունէ աւելի առիթներով զանազան քաղաքներու մէջ ցոյց տրուած է նոյնիսկ տեղական հեռուստատեսութեամբ:

Խթանուած ցուցաբերուած խանդավառութենէն, Գալիմեան շարունակած է իր փնտտողները, և այս անգամ՝ ընտանիքին բոլոր անդամներուն սերտ գործակցութեամբ, կնոջը, որդւոյն և աղջկան, յաջողապէս իրագործած է այս վաւերագրական ժապաւէնը՝ որուն ներկայացումին, Գահիրէի մէջ ալ, պիտի սպասենք անհամբեր ...:

Սակայն, Գահիրէէն առաջ, Մայիսի 13-ին, այս վաւերագրական ժապաւէնը պիտի ցուցադրուի Ադեքսանդրիոյ Ալ Ֆիմուն Ալ Կամիլայի հանդիսասրահին մէջ՝ Տնօրէնութեան սերտ գործակցութեամբ:

"Տ."